## Արձանագրություն N 3

**Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կարիքների համար կենցաղային ապրանքների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/74» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության**

ք. Երևան

06.06.2019թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Բաղդիշյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Սիմոնյան /գնահատող/, Ռ. Ղասաբօղլյան /գնահատող/, Լ. Սաղոյան /բացող/, Ա. Սուլյան /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Համբարձումյան |

### 1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/74» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

---

(Ա. Բաղդիշյան)

Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/74» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ներկայացել է «Վեգա Ուոլդ» ՍՊԸ-ի, ներկայացուցիչը՝ համապատասխան լիազորագրով:

Բանակցությունների անցկացման համար չափաբաժնի մասով սահմանվել է հինգ րոպե ժամանակահատված, որի ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել են նոր գնային առաջարկ, որը չի գերազանցել գնման առարկայի նախահաշվային արժեքը /հավելվածը 1.1 կցվում է/:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

### 2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

---

(Ա. Բաղդիշյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/74» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով «Վեգա Ուոլդ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 3. Ընթացակրգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին

---

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 3-րդ ենթակետի:

1.3 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

### 4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

---

(Ա. Բաղդիշյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Բաղդիշյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________ Ա. Բաղդիշյան

Անդամներ՝ ______________ Ա. Սիմոնյան

______________ Ռ. Ղասաբօղլյան

______________ Լ. Սանդոյան

______________ Ա. Սուլյան

Քարտուղար՝ ______________ Ա. Համբարձումյան

## Հավելված N 1.1

**Երևանի քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կարիքների համար կենցաղային ապրանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/74» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության թիվ 3 արձանագրության**

ք. Երևան

06 հունիսի 2019թ.
ժամը 17:00

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի հետ իրականացված բանակցությունների ընթացքում «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկները.

| Չափ. անվանումը | ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ ՀՀ դրամ | | ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|
| | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ | |
| 3. Էլեկտրական մսաղաց | 335000 | 402000 | 330,000 | 396 000 | |
| | | | | | |
| | | | | | |

«Վեգա Ուորլդ» ՍՊԸ

(Մասնակցի անվանումը (ֆիրմային) (աշխատող, Անուն Ազգանունը))

Ստորագրություն